Քննարկում Հայաստանում անչափահասների արդարադատության վերաբերյալ

19.10.2011 10:40

Հարգելի փաստաբաններ,

UNICEF-ի հայաստանյան գրասենյակը ՄԱԿ-ի՝ Երեխաների Իրավունքների Կոմիտեի (CRC) նախկին նախագահ Պրոֆ Յաապ Դոյքի մասնակցությամբ (ՀՀ Կառավարության, Ազգային ժողով, հասարակական կազմակերպություններ, Մարդու իրավունքների պաշտպան) կազմակերպում է քննարկում Հայաստանում անչափահասների արդարադատության վերաբերյալ խնդիրների շուրջ, որի նպատակն է բացահայտել այն ռազմավարական լուծումները, որոնցով հնարավոր կլինի բարելավել օրենքի հետ խնդիր ունեցող երեխաների, հատկապես ամենախոցելի երեխաների խնդիրների արձագանքման մեխանիզմները Հայաստանում:

Պարոն Դոյքը իր հայաստանյան գործընկերներին կներկայացնի CRC վերջին հաշվետվության շուրջ իր մեկնաբանություններն ու նոր հաշվետվությունների նախապատրաստման վերաբերյալ իր առաջարկությունները (հատկապես կամընտիր արձանագրությունների շուրջ)՝ միաժամանակ արժևորելով CRC եզրափակիչ Դիտարկումների դերը բացերի հայտնաբերման և երկրում երեխաների իրավունքների ընդլայնման հնարավորությունների ասպարեզում:

Հանդիպումը Պրոֆ. Յաապ Դոյքի հետ տեղի կունենա հոկտեմբերի 27-ին Գոլդեն Թյուլիփ հյուրանոցի Վիվալդի սրահում, ժամը 14:00-ից 17:00-ն:

Գրանցվելու համար գրանցվել մինչև հոկտեմբերի 25-ը՝ զանգահարելով 56-45 24 ներքին 105:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })